# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2001թ. մարտի 10-ին տեղի ունեցավ Քեհլի հայ համայնքի տարեկան ընդհանուր ժողովն ու վարչության նոր ընտրությունը: Վարչությունն ընտրվեց հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Ղազարոս Կյուլերյան | Ատենապետ |
| Նշան Քուշճու | Փոխատենապետ |
| Նշան Բարլար | Գանձապահ |
| Քաչաման-Խաչիկ Բարլար | Փոխգանձապահ |
| Ժագլին Քուշճու | Ատենադպիր |
| Սախմե-Սաթենիկ Չոլաքյան | Փոխատենադպիր |
| Իսքենտեր-Սիմոն Հալգաճը | Գործակատար |

Այս տարի լրանում է Գերմանիայի հայոց առաջնորդության հիմնադրության 10-րդ տարեդարձը: Այս առթիվ Քյոլնի Ս. Սահակ-Մեսրոպ առաջնորդանիստ եկեղեցում կազմակերպվեց հանդիսավոր արարողություն «Սերենադ» սենեկային նվագախմբի բացառիկ համերգով և նկարչական ցուցահանդեսով: Բացման խոսք ասաց Ալբերտ Սեփչը: Համերգի երկրորդ՝ առաջնորդարանի մշակութային հանձնախմբի պատասխանատու մասում հնչեցին Կոմիտասի և Էդ. Միրզոյանի ստեղծագործությունները: Գերմիայի հայոց թեմի առաջնորդ, Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Բեքչյանը սրտանց շնորհավորեց երաժիշտներին:

Մինչև մարտի 31-ը բաց վարչական ցուցահանդեսում ներկայացված էին հայրենի հինգ նկարիչների 40 գրաֆիկ աշխատանքներ:

2001 թ. մարտի 18-ին Ջալախի հայ տանը տեղի ունեցավ Բադեն Վյուրթեմբերգի հայ համանքի տարեկան ընդհանուր ժողովը, ուր ընտրվեցին թեմական պատգամավորական ժողովի երեք անդամներ (Խաչիկ Փիլիպոսյան, Կարո Կարապետյան և Նվարդ Կարապետյան): Իսկ չորրորդ պատգամավորն է ի պաշտոնե վարչության ատենապետ Հակոբ Ավետիքյանը:

2001 թ. մարտի 31-ի և ապրիլի 2-ի միջև Գերմանիայի հայ համայնքներում դասախոսություններով հանդես եկավ պոլսահայ հայտնի գրող և «Արաս» հրատարակչատան պատասխանատու տիար Մկրտիչ Մարկոսյանը:

2001 թ. ապրիլի 13-ին առաջնորդարան ժամանեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երկու միաբաններ՝ Տ. Արշեն աբեղա Մանոսյանը և Տ. Ավետիս աբեղա Սահակյանը. որոնք ներկա գտնվեցին և Ս. Պատարագներ մատուցեցին Գերմանիայի թեմի եկեղեցիներում: Հայր Սուրբերը Գերմանիայի պաշտպանության նախարարության կողմից երկու շաբաթով հրավիրված էին մասնակցելու զինվորների հոգևոր կրթության դասընթացներին:

ԴԻՎԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Քյոլն, 17 ապրիլ 2001